դէպքում զօրք կուղարկեմ։ Մի քանի օրւայ կռիւներում կորցրել ենք երկու սպայ, 9 զինուոր։ Վիրաւորւած են 2 սպայ և 37 զինուոր»։

Փետր. 27–ին Երևանից Զին. Մուրթեան նախագահ բժ. Ց. Մելիքեանը ուղիղ հեռագրաթելով հաղորդում էր Թիֆլիս. «Կացութիւնը նահանգում յուզումնալից է։ Դաւալուից 70 զինուորներ ճանապարհւեցին Ղամարլու. ճանապարհին հրացանի բռնւեցին թուրքերի կողմից. 10 հոգի վերադարձան վիրաւորւած. մնացած 60–ը կորել են յայտնի չէ թէ ուր. ենթադրւում է, որ սպանւած են։ Այդ բանից Ղամարլուի մեր զօրամասերը սարսափելի ելեկտրականացած են և պահանջում են անյապաղ գնալ մաքրել Ղամարլու—Դաւալու ճանապարհը։ Այսօր այնտեղ ուղարկւեց հայ–թրքական մի պատգամաւորութիւն, բայց Օվչարի գիւղում թուրքերը բռնել են պատգամաւորներին, զինաթափել նրանց պահակներին և ամենքին յետ դարձրել։ Դաւալուն և Ռեհանլուն շրջապատւած են թուրքերով, և խիստ հրացանաձգութիւն է տեղի ունենում... Այս առաւօտ եկաւ Թիֆլիսի պատգամաւորութիւնը և վաղը մեկնում է Ղամարլու ու Դաւալու զրահապատ գնացքով, իսկ այսօր ցերեկը Ղամարլու մեկնեց կոմիսար Դրօն զինուորներին հանգստացնելու համար, որովհետեւ նրանք վերջնագիր են ներկայացրել, որ եթէ զօրախմբին թոյլ չտրւի յարձակման դիմելու, զինուորները ինքնաղատասատանի կենթարկեն հրամանատար գլխապետ Թարվերդեանին։ Դրութիւնը շատ լուրջ է»։

Թիֆլիսում Երևանից ստացւող լուրերը առաջ էին բերում ահագին իրարանցում։ Անդրկ. Կոմիսարիատը ուղարկել էր մի պատւիրակութիւն՝ տեղն ու տեղը քննելու հայ–թուրքական ընդհարումների պատճառը։ Պատւիրակութեան անդամներ Ֆ. Կարճիկեանի և Ջաֆարովի բերած զեկուցումները բուռն վիճաբանութիւնների նիւթ դարձան Սէյմի փետր. 19—20–ի նիստերում։ Մահմեդական պատգամաւորները մեղադրում էին հայերին, թէ նրանք մաքրում են Երևանի նահանգը մահմեդական ազգաբնակութիւնից՝ հայկական հող պատրաստելու նպատակով։ Հայերն, ընդհակառակը, ընդհարումների պատճառ էին ցոյց տալիս թուրքերին, որոնք արգելք էին յարուցանում ռազմաճակատ մեկնող զօրամասերի առջև։ Այս առթիւ էր, որ Ֆ. Կարճիկեանը Սէյմում արտասանեց իր պատմական մէկ ճառը՝ հանդամանօրէն ներկայացնելով հայ–թրքական կռիւների էութիւնը։

«Երբ Անդրկ. Կոմիսարիատը, ասաց նա, լուրեր ստացաւ, որ Երևանի նահանգի ու Բորչալուի գաւառի որոշ մասերում կատարւում են դէպքեր, որոնք ոչ միայն խանգարում են նահանգի ու գաւառի խաղաղ կեանքը, այլ և բոլորովին անդամալուծում են երկաթուղային հաղորդակցութիւնը. երբ լուր հասաւ, որ Ուլուխանլու—Ջուլֆա երկաթուղամասի վրա մի շարք անկարգութիւններ ու քրդական յարձակումներ կանգնեցրել են հաղորդակցութիւնը, երբ յայտնի դարձաւ, որ այնտեղ գնացքների արհեստական խորտակումներ են արւում, թալանւում են զէնք փոխադրող ամբողջ գնացքներ. երբ տեղեկութիւն եկաւ, որ գնացքներից մարդիկ են դուրս հանւում ու սպանւում. միւս կողմից, երբ լուր ստացւեց, որ երկաթուղագծի վրա այս ու այն կողմ փոխադրւող հայ զօրամասերը գնդակահարում են խաղաղ բնակիչներին, — Անդրկ. Կոմիսարիատի համար պարզ դարձաւ, որ կացութիւնը խիստ սպառնական է և անհրաժեշտ է ձեռք առնել անմիջական միջոցներ»։ Եւ ահա ուղարկւեց յատուկ պատւիրակութիւն, որի վրա դրւեց պարտականութիւն բանալու Սանդար—Սաղախլու երկաթուղին, որ փակել էին թուրքերը, և խաղաղացնել Երեւանի նահանգը։